Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2025 թվականի աշխատանքային ծրագրով 1-ին եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի աշխատանքային ծրագրով 1-ին եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված՝ էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգը:
- Լրամշակել էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայի առևտրային կանոնները:
- Իրականացնել մոնիթորինգ բաշխման ցանցից սպառողներին առաքված և առևտրային հաշվառման սարքով գրանցված էլեկտրաէներգիայի քանակի և որակի վերաբերյալ:
- Իրականացնել վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի ուսումնասիրություն:
- Հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման մասով հանրությանն իրազեկելու նպատակով կազմել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել 2024 թվականին հանձնաժողովում մուտքագրված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան տեղեկատվությունը:

- Իրականացնել հանրային կազմակերպությունների 2024 և 2025 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ:

Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության բնագավառը բնութագրող տեխնիկատնտեսական ցուցանիշները: